

ՄԵԼԻԿ

Տարեկան գինը 10 ռուբլի է, կես տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 5 կոպեկով:
Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ:
Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է Լ է Ֆ օ Ն № 252.

Պատկերասրահը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերէն):
Փայտաքարտերը ընդունվում է ամեն լիցուով:
Փայտաքարտերը համար վճարում են
խմբագրատանը տողատուները 10 կոպեկով:
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐԱՅԻՆ ԴԱՐԱՆ

Յայտնելով ծանօթներին և յարգողներին, որ

Ս Տ Ե Փ Ա Ն Զ Ե Լ Ի Ն Ս Կ Ի Յ

վսխմանք հոկտեմբերի 22-ին, նրա քոյր Ալեքսանդրա Բողոսովա ծանուցանում է,
որ այսօր, երեկոյան 6 1/2 ժամին հանդուգնալի ընկերներով տեղի կունենայ ամ-
բիծը (Կոնստանդնուպոլիսի 14-րդ թիվի վրայ) Կոնստանդնուպոլիսի 10-ին: 1—2

Եղիսաբեթ Աւետեան Տէր-Յովհաննիսեանցը իր որդեկրանցով և Հովհաննիսեանցի Գրի-
գորեան Շերմազանեանցը քաղաքի քոյր յայտնում են առաջինը իր անմոռանալի ամուս-
նու, երկրորդը իրանց անփոխարինելի հօր և երրորդը իր թանգագին եղբոր Ե-
ղուհեան հաւատարմատար

ՅԱԿՈՎԻ ԳՐԻԳՈՐԵԱՆ ՏԵՐ-ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑԻ

ժամը, որ տեղի աւելցաւ հոկտեմբերի 18-ին, երեկոյան 7 ժամին. սրանով յայտնում
են ազգականներին, ծանօթներին և հանգուցեալի ընկերներին շնորհ բերել յուզարկա-
ւորութեանը, որ տեղի կունենայ կիրակի, հոկտեմբերի 24-ին դէպի ա. Նշան եկեղե-
ցին և աշտեղից Խօջիվանքի գերեզմանատունը, հոգեհանգիստը ամենայն օր երեկո-
յան 6 1/2 ժամից: Վերամիսովսկայա փ. № 16. (հ. շ.) 2—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կրեդիտի հարցը. — Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Ստեփան Զելիսկի. Մամուլ. Նամակ Գանձա-
կից. Նամակ Բաթումից. Ներքին լուրեր. — ԱՐ-
ՏԱԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը. —
ՀՆՈՒԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ԿՐԵԴԻՏԻ ՀԱՐԿԸ

Պետերբուրգի ընկերութիւններէն մէկը,
որ զբաղւած է կրեդիտի խնդրով, դիմել է
Թիֆլիս, Կովկասեան գիւղատնտեսական
ընկերութեան մի հարցով, թէ արդեօք
Կովկասում շատ կան փոխառութեաններ. ո-
րոնց նպատակը լինէր տալ մանր փոխա-
ռութիւններ և թէ արդեօք որքան մեծ է
այդպիսի ընկերակցութիւնները պահան-
ջը երկրի մէջ:

Ինչպէս յայտնի է մեր ընթերցողներին,
այդպիսի ընկերակցութիւններ շատ չը կան
մեր երկրում, միայն մի քանիսը գոյու-
թիւն ունեն Թիֆլիսի և Գուրայիսի նա-
հանգներում, մի քանիսն էլ Երևանի նա-
հանգում: Այդ ընկերակցութիւնները բո-
լորովին համապատասխանում են տեղա-
կան պահանջներին, բայց չեն կարողա-
ցել այնքան պատասխանով կենսել մէջ,
որ նրանց թիւը աճէ արագութեամբ:

Մեր ազգաբնակչութիւնը մասնաւոր
պարագանքի մէջ խելաված է, տալիս է
փողատէրերին մեծ տոկոսներ և ամեն օր
զգուշ է կանոնաւոր և էծան կրեդիտի
բացակայութիւնը: Բայց նա չէ տեսել
այնքան շօշափելի աշող օրինակներ, որ
մի անդամից կազմակերպւել կրեդիտային
ընկերակցութիւնների մի ամբողջ ցանց
և նրա միջոցով հոգար իր կարիքները
կրեդիտի վերաբերութեամբ:

Այն մի քանի ընկերակցութիւնները,
որոնք գոյութիւն ունեն մեր իրականու-
թեան մէջ, անշուշտ պատասխանատու
դեր են ստանձնել իրանց վրա: Նրանք ոչ
միայն պէտք է կարողանան գոհացում տալ
այն խմբերին, որոնք յանձն են առել ա-
ռաջին ընկերակցութիւնները կազմելու
մեր երկրում, այլ և իրականացնեն մի խո-
շոր հարց այդպիսի ընկերակցութիւնների
պիտանիութեան մասին մեր երկրում:

Անկասկած, ընկերակցութիւնները կա-
ռուցել են փնտրել այնպիսի պատահական
պատճառներէն, որոնք ոչ մի կապ չու-
նեն այդպիսի հիմնարկութիւնների գոյու-
թեան հիմնական պայմանների հետ: Այդ
պայպէս է, բայց գործնական մարդիկ,
իրականութեան մարդիկ, շատ անգամ
անընդունակ են լինում զանազանել էակա-

նը պատահականից, կարելոք մասնաւոր-
րէն:
Կրեդիտի պահանջ մենք ունենք և այն
էլ մեծ չափով: Բայց պէտք է կարողա-
նանք առաջին փորձերը լաւ կազմակեր-
պել, որպէս զի հարկէնք ճանապարհ կրե-
դիտային հիմնարկութիւնների մի ամբողջ
ցանց կազմելու համար մեր երկրում:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍՏԵՓԱՆ ԶԵԼԻՍԿԻ

Երէկ, հոկտեմբերի 22-ին, Թիֆլիսում վախ-
ճանվեց Ստեփան Զելիսկի. Հանգուցեալը
յայտնի էր մեր հասարակութեան իր գրական
աշխատութիւններով և հասարակական գոր-
ծունեութեամբ: Նա պատկանում էր մեր երկ-
րի հետազոտողների այն սակաւթիւ խմբին,
որ ճանաչում է երկրի և նրա բնակիչներին,
վերաբերվում էր ուսումնասիրութիւններէն գոր-
ծին լրջութեամբ և բարեխղճութեամբ:

Զելիսկի աշխատութիւնների մէջ ամենա-
կարեւորներն են Ալեքսանդրաօլի և Զանգե-
զուրի գաւառների ուսումնասիրութիւնները
յայտնել մի բառարան այն կովկասեան բառե-
րի, որոնք գործ են ածվել Կովկասում գիւղա-
ցիների կենցաղի ուսումնասիրութիւնների մէջ,
մի շարք գիւղատնտեսական յօդուածներ և
հանրամատչելի գրքոյկներ: Զելիսկին նաև
մասնակցել է Արարատի այն վերելքին, որ
կազմակերպել էր ուսուցիչ Օրբոյզեան:

Հանգուցեալը նախ ուսուցիչ էր Երևանի
գիմնազիայում, ապա հրաւերվեց 1883 թ-ին
Թիֆլիս երկրագործութեան միջնատրի լիազօր
Տիլիսեյի կողմից իր և պետական գիւղացինե-
րի կենսաբան ուսումնասիրող, իսկ յետոյ իր և
գիւղական հոգերի կարգադրող:

Զելիսկի հայկական ծագումն ունէր և գի-
տէր հայերէն: Նա տալի է յօդուածներ «Մշակ»
և «Արձագանք» լրագրերում և հրատարակել
է մի քանի աշխատութիւններ: Վերջին նրա
հայերէն աշխատութիւնները՝ հանրամատչելի
բրոշուրներ են գիւղատնտեսական ճիւղերից:
Նա ունի անուիպ հետազոտութիւններ, ո-
րոնք վերաբերում են Բօրչալուի և Լենքորեան-
ի գաւառներին: Զելիսկին մի ժամանակ
մասնակցում էր Հրատարակչական ընկերու-
թեան գործերին: Նա վարում է վարչութեան
փոխ-նախագահի պաշտօն: Վերջին տարիները
Զելիսկին ստացաւ ծանր հիւանդութիւն, ո-
րից նա չը կարողացաւ բժշկվել, թէև կատարեց
յատուկ ճանապարհորդութիւններ դէպի Զրեբը:

Մ. Ա. Մ. Ո. Ի.

Մի քանի տանի առաջ Թիֆլիսի քաղաքա-
յին ինքնավարութիւնը բաց արաւ մի խա-

նութիւն, որոնց նպատակն էր ազատել ազ-
գաբնակչութիւնը տեղական մասնաձառների
բնահաճութիւններից ու կամայականութիւննե-
րից, հայկաթիւ լաւ տեսակի միս և գլխաւո-
րը, էծանացիները: Գործը այն կերպարան-
քով ինչպէս առաջին անգամ բացվեց հասա-
րակութեան առաջ, մեծ համակրանք գրաւեց.
խանութիւնը պաշարված էին գետնեղով, հա-
զիւ էին կարողանում կատարել ահագին պա-
հանջներ մի մասը: Ամեն տեղ խոսակցու-
թեան առարկան այդ ձեռնարկութիւնն էր:
Նոյն իսկ օտար քաղաքներէն մէջ էլ նա հետա-
քըքրութեան առարկայ դարձաւ, ոչ միայն
Կովկասից, այլ և Ռուսաստանի գանազան կող-
մերից հարց էին տալիս մեր քաղաքի ինքնա-
վարութեան, թէ ինչ հիմքեր վրա է դրված
քաղաքային մասնաձառութիւնը: Տեղային մա-
մուլի արտայայտած համակրանքների մասին
աւելորդ է խօսել: Քաղաքային ինքնավարու-
թիւնը պարզեցում էր իր այդ գործով: Եւ ի-
րաւունք ունէր: Բացի իրանց յատուկ նշանա-
կութիւնից և անմիջական նպատակներից, մի
խանութիւնը գալիս էին սկզբունքով որոշելու
ազգաբնակչութեան համար կենսական չափա-
զանց կարեւոր հարցեր, այն է սեփական լըն-
տեսութեամբ անհրաժեշտ մթերքների յատ-
կութիւնները լաւացնել, նրանց էծանացիները,
ամենքին մատչելի դարձնել: Միայն յետոյ
հերթը կարող էր գալ հարցին, փայտի և այլն:
Բացի դրանից քաղաքը պիտի դրանով ցոյց
տար թէ որքան ընդունակութիւն ունի անտե-
սական ձեռնարկութիւններ շահագործելու մէջ:
Մեզանում քաղաքի եկամուտները աւելացնելու
համար գրեթէ մի հատիկ միջոց կայ—տուրքեր
աւելացնելը, մինչդեռ բարեկարգ կուտուրա-
կան երկրներում քաղ սեղները հարստութեան
աղբիւրներ գտնում են գանազան անտեսական
ձեռնարկութիւնների մէջ—տրամվայներ, տէլե-
ֆօններ և այլն:

Հին առևտրական ձեռնարկութիւն է մեզա-
նում—խանութ կամ ուրիշ որ և է ձեռնար-
կութիւն պիտի առաջին օրից շահ բերէ: Այդ
պատճառով էլ մեզանում միայն փորձված,
անկասկածելի շահաւետ գործերն են սկիզբ
առնում, առաջ գնում: Խիզախ ձեռններեցու-
թիւն, պահանջ ստեղծողի ոգի մենք միշտ
թողնում ենք եւրօպացուն: Անա այդ հայրենի
յատկութիւնն էլ քաղաքային մասնագործութեան
մէջ վճող դեր կատարեց: Վնասները սար-
սափեցին: Բայց ֆլանները գործի սկզբում
անխուսափելի էին, բանի որ մի խանութ-
ները ուղղակի ուղղակի նպատակ ունէին—
յաղթահարել տեղային մասնագործներին, խախ-
տել նրանց շահագրգիռական մենաշնորհը, հա-
նել շուկան նրանց տիրապետութեան տակից:
Պէտք է ասել, որ այդ նպատակը համարեա
թէ իրագործված է: Պէտք էր այնուհետև կա-
նաւոր, խելացի կազմակերպութեամբ առաջ
տանել գործը, որպէս զի ֆլանների առաջն
առնելի և ձեռնարկութիւնը դառնայ մշտական
մի հիմնարկութիւն, որ ազդէ միշտ, որ կա-
նոնաւորէ շուկայի գնները իր և կոչման բարձ-
րութեան վրա կանգնած մի ձեռնարկութիւն:
Բայց կազմակերպական ընդունակութիւնն Ե-
րևան չեկաւ և նոյն ասիական սկզբունքը
յաղթող հանդիսանալով, էծանութիւնը կա-
պեց էծան ապրանք գնելու հետ: Ու սկսվեց
քայքայումը: Հասկանալի է, որ տեղական մա-
մուլը չէր կարող համակերպել վերաբերվել
այն յուսահատական եղբակացութիւններին,
որոնց հասել է քաղաքային ինքնավարութիւնը
և որոնց արտայայտութիւններն են «փակել»,
«ծախել», «վարձով տալ» բառերը, որոնք
այժմ լսվում են ձայնաւորների մէջ: Մամուլը
առաջարկում է գանազան միջոցներ, որոնց
քննութեան մէջ մենք այսօր չենք մտնի:
Կարեւորն այն է, որ թէ մամուլը, թէ հասա-
րակութեան հասկացող մասերը այն կարծիքի
են, որ չը պէտք է փակել, պէտք է շարունա-
կել, բայց աւելի կանոնաւոր, գործնական
«Ноб. Обозр.» լրագրերը առում է:

Մի քաղաքային խանութների վերացու-
մը կարճակէ մեր մասնաձառների սանձերը
և կը տալ նրանց իրաւունք և աւելի մեծ
ցանկութիւն իրանց օգտին ծառայեցնելու
անանաւաճառութիւնը և շուկայի պայման-
ները:
Այս կարծիք է յայտնում «Кавказ. Сель-
ское Хозяйство» քաղաքների: Մինչև այժմ
կրած ֆլանները գոնէ այն են արել, որ օգնել
են քաղաքի բնակչութեան: Եւ իրաւ, պէտք է
նայել գործին հասարակական լայն տեսակէ-
տից: Երբ քաղաքը մասնավոր է անտեսական
մի դժբաղդ պատահարի, մի հիւանդութեան,
քաղաքային վարչութիւնը պարտաւոր է օգ-
նութեան հասնել, ուղղորդութեան չառնելով,
թէ դրանով նա ֆլաններ կը կրէ, բանի որ
փոխարկութիւն անմիջապէս և ուղղակի կեր-
պով չը պիտի ստանայ: Փոխարկութիւնը
հէնց այն օգուտն է, որ ստանում է բնակչու-
թիւնը իր կենսին ու ստողութիւնը պահպա-
նելով: Միթէ մի և նոյնը չէ և այս դէպքում:
Ազգաբնակչութեան լաւ և կարելիին չափ էծան
մթերք տալը նոյնքան կարեւոր է իր և մշտա-
կան հոգացողութիւն, որքան էծանաւարտը
արտադրող ծախսերը խօրհալել կամ էծան-
տախտի ժամանակ: Կրկնում ենք, մեզ համար
այս հարցում նշանակութիւն ունեցողը սկզ-
բունքն է, ինքնօգնութեան գաղափարն է, ա-
ռանց որի մենք երբեք չենք ազատվի փողա-
տէրերի և շարժիների խնամակալութիւնից:
Պէտք է, վերջապէս, որ քաղաքային ինքնա-
վարութիւնը ապացուցանէ, թէ կենդանի հա-
սարակական գործերի համար է ստեղծված և
ոչ թէ թղթի վրա բերօքրատական մեծա-
գործութիւններ և վիճանձնութիւն ցոյց տա-
լու համար: Պէտք է, վերջապէս, հաւանութիւն
հրապարակ բերել. ոչ թէ սպանել մի համալ-
րելի բայը, այլ անել երկրորդ, երրորդ քայ-
լերը, հասարակական կարիքները հողալ կեն-
սունակ կազմակերպութիւնների միջոցով: Կօ-
օպերացիայի գեղեցիկ սկզբունքը մեր երկրում
չէ արմատանում. պատրաստ հող չը կայ դեռ,
մեր ժողովուրդը մոռ է, իսկ նրա հասկացող
տարրերը ձեռններեցութեան յաղապարակն չեն
վայելում: Սպասողական ընկերակցութիւնը էին
հարկաւոր անտեսական բարդիւղ հանգամանք-
ների ծանր լուծը թիֆլիսացիները համար: Դար-
ձեալ չը կան նրանք: Մնում է, որ քաղաքա-
յին ինքնավարութիւնը գոնէ մասամբ, որքան
կարելի է, զարգացնէ այդ սկզբունքները, ի-
րականութիւն դարձնէ ինքնօգնութեան գաղա-
փարը իր բարեկարգ հիմնարկութիւնների մի-
ջոցով: Անա ինչու անչափ ցուալի կը լինի,
եթէ ասիական անընդունակութիւնը հարկա-
զրէ փակել մի խանութների գոնեքը: Դա կը
լինի մի ծաւր գատավճիռ մեր գործիչների
համար...

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՅ

Հոկտեմբերի 12-ին

Ոչ այնքան ձեռնարկած միջոցների, որոնք
անչափ չնչին են ու խղճով, ինչքան հովա-
սուն, երեքնասիկ նոյն իսկ ցուրտ, եղանակ-
ների շնորհով Գանձակի երկաթուղու կայա-
րանում երեսցած խորեան ֆնաց, բարեբաղ-
դարաւ, իրեն պատահական խոռոչի երկուցի,
չը դարգացաւ, չը տարածվեց մինչև օրս: Եր-
կեղը, որը մի քիչ օթափեցրեց, քիչ գոնէ
զգուշանալ ստիպեց մեր քաղաքացիներին,
տեղի տուեց նախկին անհոգութեան ու ան-
տարբերութեան. վտանգը անցած է համար-
վում. ամեն բան գնում է առաջվայ պէս. նոյն
իսկ հոշակաւոր ջրօրները ջրերից ծածուկ,
աշխարհ օգտվել են սկսում:

Ոչ միայն մեր խաւար հասարակութեանը
անմատչելի լուրջ դիտութիւնը, այլ տարբա-
կան խելացիութիւնը անգամ, պահանջում են
զգուշ լինել, շատ զգուշ և այդ առնուաղը մի
սարի շարունակ խօրհալի պէս սարսափելի
վարակիչ հիւանդութիւնը երկաղուց ու անձե-
սանալուց յետոյ: Նրա անհետանալը կամ թոյլ
երեւել կարող է շատ խառնակ լինել. ա-
ռաջի յարմար մօտեցնում, գարնանը, օրհնակ,
հետեւալ ամառը, նա կարող է դարան մտած
թշնամու պէս յանկարծակի երևալ ու տարած-

վել սարսափելի ոյժով: Գիտնական լուրջ հետազոտողները (Կոխ, Բրուսթեր, Մեյնհոլդ) ասում են, որ աշնանը թույլ նշաններով երեւացած ու անհետացած խոլերան կարող է հետեւեալ զարնանը կամ ամառը տարածվել յանկարծակի ու մեծ ծաւալով:

Գանձակում էլի բնիշատ հսկողութիւն, խնամք, հոգատարութիւն կայ: Բժիշկներ ու առողջապահիկ հոգաբարձուներ կան: Ձէ որ նա քաղաք է, այն էլ նահանգական քաղաք: Եթէ ոչ, այսպէս ասած, ինտելիգենտական, գոնէ չինովնիկական գործունէութիւն կայ այդ ասպարէզում: Այդ էլ մի բան է, թէև առաջի տեսակները, բարոյական պարտաճանաչութիւնից բխած, աւելի ցանկալի ու օգտաւէտ է... Մեր գիւղերն են ուղղորդին անխնամք, խելացի, բանիմաց հոգատարութիւնից զուրկ: Գանձակի նահանգում կան հարկաւոր գիւղեր: Նահանգը իր ամենագիւղաշատ մասով, Ձանգիւղերի գաւառով, կայծ է Պարսկաստանի այն մասին, որտեղ այժմ խօսքնան գնալով աւելի ու աւելի մեծ ծաւալ է ստանում ու աւերածութիւններ կատարում: Եթէ այն կողմից նա մտնի Գանձակի նահանգը, որը շատ հաւանական է, իր զարգացման ու առաւելման համար այն կողմի մեր գիւղերում կատարեալ պարսկական յարմարութիւններ կը գտնի: Ասենք նահանգի միւս մասերի գիւղերը պահա յարմարութիւններ չունեն խօսքնայի գարգացման համար: Կուտորական յետմնացութիւնը բոլոր գիւղերում համարեալ մի և նոյնն է: շատ բնիշատ քիչ շատ միջիջրային է: Այն գիւղերում, որտեղ կայ կրթութիւն քահանայ, ուսումնարան, ուսուցիչ, որտեղ ստացվում է լրագիր, և կան ընթերցողներ, էլի մի բան լսել ու լսում են խօսքնայից պաշտպանվելու մասին, մաքրամաքութեան, համեմատաբար մարդավայել կենցաղավարութեան նշույններ նկատվում են, իսկ նրանք, որոնք այդ առաւելութիւններից զուրկ են, խարխալում են կատարեալ խաւարի մէջ, պարսկականից ոչ պակաս մտայն:

Պաշտօնապէս ամեն գիւղում, ի հարկէ, որը գործողութիւն կատարվել է խօսքնայի առաջի առնելու համար: Գիւղական ամբիւր, իր յոյսը դրած իշխանութեան վրա, համոզված է, որ նա կը պահպանի իրան, նա իր հրամաններով խօսքնայի յետ կը տայ: Ամբիւրի աչքում իշխանութիւնը հրաշագործ ոյժ է: Նրա հրամանին ու մտրակին են թարկվում են նոյն իսկ ընտելեան օրէնքները...

Պէտք է մեր գիւղական ուսուցիչները ու այն քահանաները, որոնք գիւրք, լրագիր են կարդում, աշխատեն դպրոցներում ու եկեղեցիներում յաճախակի խօսել այս սեղօնում խօսքնայի մասին, աշխատեն ըստ իրանց կարողութեան տեղեկութիւններ տարածել նրա մասին գիւղական ամբիւրի խաւարում: Այդ պարտքը առաւել ևս ծանրանում է ուսուցիչների վրա, իբրև աւելի ձեռնհաս անձանց: Այդ աչքի առաջ ունենալով, Գանձակում տեղի ունեցած ուսուցչական ժողովում մի դասախօսութիւն կարգացվեց խօսքնայի մասին: Անցեալ ամառ ուսուցիչները ցրված էին, չը կային գիւղերում այն ժամանակ, երբ խօսքնայի տարածման առաջին առնելու համար պաշտօնական կարգադրութիւններ եղան: Այժմ նրանք վերադարձել են իրանց պաշտօնատեղեր: Եթէ նրանցում բարի ցանկութիւն լինի, նրանք այս աշնան ու առաջիկայ ձմեռվայ ընթացքում բաւականին բան կարող են անել, նախապատրաստել կարող են մեր գիւղական ամբիւրը կոչելու այն պատուհանի դէմ, որը առաջիկայ զարնան կարող է հեշտութեամբ երևալ Պարսկաստանի հետ մշտապէս շփվող մեր լայնածաւալ նահանգում:

Ստ. Տէր-Աւետիքեան

ՆԱՄԱԿ ԲԱԺՈՒԹԻՅՑ

Հոկտեմբերի 19-ին

Յանդուգն աւաղակութիւնների թիւը օր օրի վրա աւելանում է: Դեռ այնքան վաղ չէր Փօթիի գանձարանի և Բուծայիսի փոխառու վարկի ընկերութեան վրա յարձակվելը: Իսկ երկաթուղու գնացքների և զանազան արտէլը-չիկների վրա յարձակվելը, կարծեք, սովորական բան է դառել:

Անա ևս մի յանդուգն յարձակում Բաթու-մում:

Ամսիս 18-ին, երեկոյեան ժամը 9-ին, մի խումբ զինված աւաղակներ յարձակվում են քաղաքային հիւանդանոցի վրա: Մտնելով հիւանդանոցի գրասենեակը, ուր այդ քաղաքի վերահսկիչը պատրաստվում է եղել դուրս գալ, կանգնեցնում են նրան և պահանջում

կասալի բանալիները: Վերահսկիչը առանց մի դիմադրութիւն ցոյց տալու յանձնում է բանալիները: Բայց բարեբաղդաբար, ինչպէս է պատահում, կասալի երկրորդ (միջի) դռն բանալին վայր է ընկնում և աւաղակները չեն նկատում: Բացելով կասալի առաջի դուռը, կարծում են, որ երկրորդ դռան բանալին, անշուշտ, վերահսկիչը թաքցրել է: Որոշելով բոլոր գրպանները և ոչինչ չը գտնելով, սկըսում են երկրորդ դուռը կոտրել, բայց անաշույ: Մինչ այդ աղմուկից հաւարվում են մարդիկ և աւաղակները ստիպված են լինում փախչել, տանելով մօտադրապէս 100 ր., որ գտնվել էր վերահսկիչի գրպանում:

Աւաղակները եղել են զինվորների:

Ար. Մակարեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՆԵՐ

Հոկտեմբերի 20-ին, ի Տէր հանգուցեալ Թագաւոր Կայսր Ալեքսանդր III-ի մահվան օրը, Վրաստանի էկզարխը Սիօնի մայր եկեղեցում, աշտուրագից յետոյ հոգեհանգիստ կատարեց: Ժամասացութեանը ներկայ էին Կովկասի կառավարչապետի ժամանակաւոր պաշտօնակատար ինֆանտերիայի գեներալ Ա. Ս. Յրեզէ, գեներալներ, գեներալ-մայորներ և քաղաքացիական վարչութիւնների պաշտօնեաները, ազնուականութեան, քաղաքի և զանազան հիմնարկութիւնների ներկայացուցիչները և բազմաթիւ աղօթողներ:

Հինգշաբթի, հոկտեմբերի, 21-ին, Թագաւոր Կայսրի գահակալութեան օրը, Ալեքսանդր-Նեվսկու զինուորական տաճարում հանգիստը պատարագ մատուցվեց, որից յետոյ զոհացողական մաղթանք կատարվեց: Ժամասացութեանը ներկայ էին Կովկասի կառավարչապետի պաշտօնակատար ինֆանտերիայի գեներալ Ա. Ս. Յրեզէ, գեներալներ, գեներալ-մայորներ և քաղաքացիական վարչութիւնների բարձաստիճան պաշտօնեաներ և բազմաթիւ ժողովուրդ: Մաղթանքի ժամանակ Արեւելայի սարից արձակվեց 21 թնդանօթ: Մաղթանքներ կատարվեցին և հայոց վանքի մայր եկեղեցում և այլ դաւանութիւնների աղօթատեղերում: Բաղաժը առաւօտից զարդարված էր դրօշակներով, իսկ երեկոյեան լուսավառութիւն կար:

Ուլուխանլու—Ջուլֆայի կառուցանվող երկաթուղու բանաւորների մէջ խօսքնայով հիւանդանոցի գէպերի առիթով, Երևանի երկաթուղու Ուլուխանլու կայարանում առաւ ձին հսկողութիւն է նշանակված այնտեղից ձանապարհ ընկողների համար: Բացի դրանից բժշկական առանձին հսկողութիւն է նշանակված Թիֆլիսում Երևանից և Ուլուխանլուից եկող բանաւորների վրա:

Մեր ստացանք հետեւեալ հեռագիրը Արցախի-սից հոկտեմբերի 21-ից, «Այսօր հողին յանձնեցին ընդհանուր յարգանքը վայելող տեղացի լեռնային ինժեներ Մկնտոր Ներսիսեանցի մարմինը: Հանգուցեալը սպանվեց հրացանի հարուածով Վերին-Ագուլիսի գլխաւոր փողոցի վրա, կէսօրից յետոյ 5 ժամին: Մկնտոր Ներսիսեանցը բոլորովին երիտասարդ մարդ էր, և նորբեր վերադարձել էր հայրենիք ուսումնաւարտելուց յետոյ: Հանգուցեալի սպանողն է նոյն գիւղի բնակիչ մանկեղան Ծահրատը, յայտնի քիչիքովիւստ, որը նորբեր արձակված էր բանտից և դրանից յետոյ աշխարհայնա-կարգութիւններ էր անում, երկաթով բէրզան հրացանը ձեռքին և սրանից նրանից փող պահանջելով: Մարդասպանը յայտնում էր, որ շուտով կը կատարէ մի այնպիսի սպանութիւն, որ կը զարմացնէ բոլորին: Այդ սարսափելի սպանութեան շարժառիթներ չը կան: Անկարգաբերի է հասարակութեան զայրոյթը և հանգուցեալի ծնողների և բարեկամների վիրշոյ: Մարդասպանը երկիւղ է ներշնչում շատերին: Հանգուցեալը սպանութեան երեկոյեան զրօնում էր իր բարեկամ Բժիշկ Ա. Երանցի հետ, երբ զոհելի յանցաւորը 13 քալ հեռաւորութիւնից հրացան կրակեց նրա կրծքի վրա՝ մի աչքի ընկնող մարդ սպանելու հոչակ վայելելու համար: Մահը վայրկեանական էր»:

Փօթիից «Յնօրիս-Փուրցէլի» լրագրին հաղորդում են, որ հոկտեմբերի 13-ին երկաթուղու կայարանում ընկնեցին երկու պարսիկ, որոնց մօտ գտնվեցին հինգ բուրձիանոց շատ կեղծ դրամներ:

«НОВ. ВРЕМЯ» լրագրին Փօթիից հաղորդում են, որ հոկտեմբերի 19-ին, երեկոյեան, Մուկղէից հեռագրում են, թէ գեներալ Կու-

չորս զինաւորված չարագործներ մտան վահանական խէչայի խանութը, որ գտնվում է Գաղաքինան փողոցի վրա, և խեցիկ 500 ր. փող, արծաթէ գօտի, ժամացոյց և եսփնջի: Չարագործները անհետացան քաղաքից:

«НАВЯЗЫ» լրագրին հաղորդում են, որ ներքին գործերի միւստարութիւնը հաստատել է Բաթումի՝ մահվան դէպքում փոխադարձ օգնութեան ընկերութեան կանոնադրութիւնը:

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են. «Գանձակում շուտով կը սկսի իր գործունէութիւնը տեղական փոխադարձ վարկի ընկերութիւնը, որի կանոնադրութիւնը կառավարութեան կողմից հաստատված է արդէն: Անդամներ կան մօտ 300 հոգի: Իւրաքանչիւրը մտցնում է ընկերութեան դրամաւրկը միանուագ 100 ր. ու մինչև 1000 ր. կրեցիտի իրաւունք է ստանում: Պետական գանձարանը նպաստ է տալիս գործին մօտ 30,000 ր.: Շուտով տեղի կունենայ անգամների ընդհանուր ժողով, որը կընտրի վարչութիւն ու այդպիսով ընկերութիւնը պաշտօնապէս ձեռնամուխ կը լինի իր գործունէութեան: Գանձակը միշտ, իսկ վերջին տարիներս ևս առաւել, կարել էր զգուժալիս մի հանրամատչելի կրեցիտական հաստատութեան: Նրա աշխատութիւնը կախված է գլխաւորապէս գործի նախաձեռնողների ու ղեկավարների բարեխղճութիւնից ու եւրասիայից, յոյսով ենք, որ նրանք զուրկ չեն լինի այց արժանաւորութիւններից»:

ՄԱՏՐԱՍՏԱՅԻՑ մեզ խնդրում են տպել. «Յայտնում ենք մեր խորին շնորհակալութիւնը բազումաճակ տիկին Սօֆիա Բուդաղանին, որ այս օրերս գալով հոգաբարձու պարոն Ա. Ագրեանի տունը, նուիրեց մի հարկուր բուրդի Մատրասայի ուսումնարանի աղբատ և որը աշակերտների օգտին»:

ԵՐԵՎԱՆԻՑ մեզ գրում են. «Երևանը իր հիւսիս-արևելեան կողմում ունի մի փոքրիկ արուարձան Նորք անունով: Նորքը բնակիչները ամենայն օր ձմեռ թէ ամառ, մի երկար ձանապարհ կտրելով քաղաք են գնում հաց աշխատելու: Թէև նա քաղաքի մասն է համարվում, բայց բոլորովին անուղղութեան է մատնված քաղաքային վարչութեան կողմից: Համեմատած իր բնակիչների թուի հետ, վերջին տարիներում համարեա «բազմաթիւ» սպանութիւններ են պատահում. այս տարի, օգոստոսի 16-ին մօտիկ ձորից մէկում սպանեցին մի խեղճ ծերունու: Իսկ այսօր, հոկտեմբերի 12-ին, գիշերը, սպանեցին ջրպետ Ատովմ Ջաքարեանին: Գնդակը խփել են ուղիղ աւանջի միջից, որը չէ դուրս եկել, և սպա զոհ են ջրով լի մի առուակ: Սպանողները հաստատապէս դեռ յայտնի չեն: Վերջին օրերը շարունակ անձրևում է, ցեխը անտանելի է, այգեկուծի վերջնաւու վրա է»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱՅԻՑ ԾՈՒՐՁԸ

Շախի գեհի մօտ տեղի ունեցած կռիւները, «НОВ. ВРЕМЯ» լրագրի թղթակիցը, խօսելով Շախի գետի մօտ տեղի ունեցած կռիւների մասին, հետեւեալ կերպով է վերջացնում իր յօդուածը. «Մեծ կորուստներ կրեցինք մենք այդ բազմօրեայ կռուի մէջ, բայց այդ կորուստները, ինչպէս և բոլոր դիւքերը, վերջնական հաղթող, այնու ամենայնիւ աւելի բնիշ նահաւոր են, քան նախկին պատերազմները: Ներկայ պատերազմի մէջ մենք գրեթէ կորուստ չունեցանք վարակիչ հիւանդութիւններից: Մեր զօրքի սանիտարական մասը, շնորհիւ գիւտութեան-բժշկական կազմակերպութեան և կարմիր թաշի, գլուխ ունենալով գեներալ Տրեպոլին, օրինակելի բարձրութեան վրա է տրված: Վէրքերի պատճառով կազմից դուրս եկածներից մէկ մասը շուտով վերադառնում է կազմի մէջ: Բնաւորանաւորյին մասը նոյնպէս հաւասար բարձրութեան վրա է կանգնած: Մեր զինուորը սնվէս է կերակրվում այստեղ, ինչպէս չէր կերակրվում Ռուսաստանում: Շնորհիւ դրան, մանրեական բանակի մէջ հիւանդութեան ընդհանուր տոկոսը աւելի ստոր է խաղող ժամանակի նօրմալ տոկոսից: Կապած չը կայ, որ զօրքերը, որոնք այնպէս լաւ տարին իրանց համար անսովոր ամառվայ տրօպիկական տաքութիւնը, աւելի լաւ կը տանեն աշնան և ձմեռը»:

Կառուցակցի ճեւղակիւս լուր գործի մէջ, Մուկղէից հեռագրում են, թէ գեներալ Կու-

րօպատկիլի ընդհանուր հրամանատար նշանակելու լուրը ոգևորութիւն առաջ բերեց բանակի մէջ: Շախի գետի մօտ կատարված ութօրեայ կռիւների մէջ ընդհանուր հրամանատարը միշտ վտանգի էր ենթարկուել իրան, մնալով անմիջապէս ուսմբերի կրակի տակ, շատ անգամ մեր արտիլերիական գիրքերի առաջ: Կռիւների մէջ անձնական օրինակ էր տալիս յարձակվող զօրքերին և զխաւոր բանակատեղին միշտ տեղաւորվում էր թշնամու կրակի շրջանում: (H. B.)

Անգլիայի պահագնացը. «Lok. ANZ.» լրագիրը հետեւեալ տեղեկութիւններ է հաղորդում Անգլիայի կողմից Ռուսաստանին ներկայացրած պահանջների մասին Հիւսիսային ծովի միջնադէպի առիթով: Անա այդ պահանջները. 1) իրականորէ ներողութիւն խնդրել: 2) առատ վարձատրութիւն: 3) յանցաւորների պատժում: 4) երաշխաւորութիւն այն մասին, որ այդպիսի միջնադէպերի կրկնութիւն չի լինի: Ծովային միւստը կուս Սելբօրնը իր արտասանած մի ձառի մէջ, սակ է. «Եթէ այդպիսի սխալ պատահէր Անգլիայի կամ Ամերիկայի հետ, այդ երկրներից իւրաքանչիւրը ներողութիւն կը խնդրէր և կը պատժէր յանցաւորներին: Կասկած չը կայ, որ Ռուսաստան ևս նոյնը կանի»:

«Matin» լրագիրը հաղորդում է, որ ծովապետ Ռօժեանովիսկին ուղարկել է անթիւ հեռագրով այսպիսի ղեկուցում. «Կրկնապատկեցէ հսկողութիւնը և արթնութիւնը, որովհետեւ կամանում նկատվել է թշնամին: (H. A.)

Նապօն-սկսն գաղսնի աշխատութիւններ: Քննելով անգլիական մամուլի վերաբերմունքը դէպի Հիւսիսային ծովի միջնադէպը, «Gaulois» լրագիրը հարցնում է, ինչով պէտք է բացատրել այն ծայրահեղ դրոշմը, որ արտայայտվեց նախ քան պատճառների բացատրութեան երևան գալը: Հիմք կայ սակ, գրում է լրագիրը, որ այդ արուեստական և անժամանակ ագիտացիան, որ յայտնվեց Անգլիայում, ինչպէս և առհասարակ անգլիական մամուլի Ռուսաստանի վերաբերմամբ գործ դրած խիստ լիզուռ առաջ է գալիս կողմնակի ազդեցութիւնից, կամ աւելի պարզ խօսելով, եսպօնական ինտրիգներից: Այսպիսի յուզմունք, որպիսին արտայայտվեց Անգլիայում, անսովոր է անգլիական բնաւորութեան, ուստի այդ յուզմունքը պէտք է վերադրել գաղտնի միջամտութեան, եսպօնական դիպուստային ջանքերին, ի դէմս նրա ներկայացուցիչ կուս Հանաչի: Չը պէտք է մոռանալ, որ միկադօի դիսպանը Լօնդօնում բարեկամական կապեր ունի անգլիական ժուրնալիստների հետ: Նա ազդեցութիւն ունի Լօնդօնի մամուլի վրա, ազդեցութիւն, որ արտայայտվել է շատ զգալի բերում:

Նապօնացիները գրաւել են վերջին դիքը Շախի գետի վրա: Նապօնական գործող բանակից ծուղանի վրայով հեռագրում են «Standard» լրագրին, թէ հոկտեմբերի 15-ին եսպօնացիները գրաւեցին ուստաց վերջին դիքը Շախից հարաւ, 12 մղոն դէպի արևելք: Այդտեղ թմբի վրա տեղաւորված ուստաց զօրքերի մի բաւալիս պատապարված է ուժեղ ամրութիւններով: Երկու կողմից ևս հերոսական շատ սխալագործութիւններ եղան: Վերջի վերջոյ ուստների յամառ դիմադրութիւնը փշղմեց: Նապօնացիները յաջողաբար յարձակվեցին երբ ընդունեցին վրա, գրաւեցին թմբի վրա գտնված կառուցը, որից յետոյ ուստները հեռացան: Առաջին և երկրորդ ընդունեցը վեցական արագաձիգ հրետանիներ ունէին: Նրանցից երկուսը եսպօնացիները կողքին առաջին ընդունի վրա: Նապօնացիների կորուստները հաշուում են 100 սպանված և վիրաւորված: Ուստները ունեցան 30 հոգի ըսպանված: (P. B.):

«ՄՇԱԿԻ» ՀՆՈԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ
20 հոկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒԳ, Հոկտեմբերի 50-ին Դանիալի վերաբերմամբ Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆեօդորովնա:

ԼՕՆԻՐՆԻ (Բէյտէր). Հրատարակված է «Կապոյտ գիրքը» Մերձաւոր Արևելքում տեղի ունեցած անցքերի մասին: զխաւորապէս գործը վերաբերում է մակեդոնական ժանդարմերի վերակազմութեան և բէֆօրմների նախադի հարցերին Մակեդոնիայում: «Daily News» լրագիրը հրատարակեց իր թղթակցի խօսակցութիւնը մի ուստ բարձրաստիճան պաշտօնատար անձի հետ Լօնդօնում: Այդ բարձրաստիճան անձի խօսքով, ինչ էլ լինի բրի-

Типог. Т-ва С. Назарянца и К. п. ф. «ГЕРМЕСЪ» Мал. ул. № 15.